սերը՝ Սանդուխտ նահատակի շաւաւիղները։

Ով որ ծանօթ է Եղիշէին և անցնում է Տղմուտ գետից, շրջում է Աւարայրի բոլորաձև դաշտի վերայ, որ իւր գետի պէս տղմուտ է, անկարող է չը յիշել, որ ինքը կանգնած է այն նշանաւոր պատերազմի դաշտի վերայ, ուր իւր նախնիքը մի վճռողական ճակատամարտ են տուել։ Այստեղ ճանապարհորդի առաջնորդը Եղիշէն է, նա պատկերացնում է հայկական վաշտերը, գունդերը, նոցա զօրավարները և զօրահանդէսը; ճակատած Տղմուտ գետի ձախ ափին։ Բայց ինչպէս քիչ են դրանք, Պարսից բազմաթիւ փաղանգների դէմ։

Մեծ և փոքր Հայաստան տասն և ութ աշխարհներից կամ նահանգներից էր կազմված, բայց Վարդանանց պատերազմին մասնակցել են միայն ութ աշխարհները, այն էլ այդ ութ աշխարհներից չորսը Վասակի առաջնորդութեամբ հայոց հին կրօնի, այսինքն պարսից կողմն են բռնել։ Այդ ութ աշխարհները կարողացել են 120 հազար զինուորներ հանել պատերազմի դաշտի վերայ։ Այդ հաշւով տասն և ութ աշխարհները, եթէ միասին գործէին, մօտ երեք հարիւր հազարի մի բանակ կարող էին կանգնեցնել ոսոխի։ Բայց ո՞ւր էին մնացել տասն մնացած աշխարհների բնակիչները։

Դա այնպիսի մի պատերազմ էր, որ չէր կարող նրանց չը հետաքրքրել։ Եթէ նոքա քրիստոնեայ էին, պատերազմը քրիստոնէութեան համար էր։ Եթէ